

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ [Կ-696-24.07.2020-ՊԻ-011/0](#) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 3, մաս 2, մաս 4	Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորումը հանդիսացել են հայտարարատու և 2018 թվականի օրենքում առանձին չեն ներառվել, քանի որ նախատեսվում էր, որ վերջիններս դառնալու են քաղաքացիական ծառայողներ և այդ հիմքով ներառվելու են հայտարարատուներին ցանկում: Տվյալ պաշտոնները մինչ օրս չեն ներառվել քաղաքացիական ծառայության պաշտոնների ցանկում, ուստի, հայտարարագրերի ներկայացման շարունակականությունն	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:

			ապահովելու նպատակով առաջարկվում է տվյալ խումբ պաշտոն զբաղեցնող անձանց ներառել հայտարարատուների ցանկում և համապատասխան կարգավորումներ սահմանել «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի անցումային դրույթներում:		
2.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 3	Առաջարկվում է առաջին «աշխատակազմի» բառից առաջ լրացնել «համայնքապետարանի» բառը, իսկ «Երևան համայնքի աշխատակազմի քարտուղարի» բառերը փոխարինել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի» բառերով:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է
3.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին » օրենքի նախագիծ, 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածում «մասում «Հայտարարատու պաշտոնատար անձը» բառերից առաջ լրացնել» բառերն առաջարկվում է փոխարինել «մասում 1-ին նախադասությունից առաջ լրացնել նոր նախադասություն» բառերով և հանել վերջին «բառերը» բառը:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:
4.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ	Նախագծի 6-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրված Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված «միլիոն» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը, իսկ 3-	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:

		կատարելու մասին » օրենքի նախագիծ, հոդված 6	րդ մասի 6-րդ կետում «գործարքի արժեքը» բառերը փոխարինել գործարքի գինը (արժեքը) բառերը:		
5.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 7	Նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 40.1-ին հոդվածի 3-րդ մասում «1-7- րդ» բառերը փոխարինել «1-6-րդ» բառերով:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:
6.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 8, մաս 4	4-րդ մասով լրացվող 6.1-ին մասից հանել «մայր գումարի» բառերը, իսկ 6.2-րդ մասից՝ «և չափը» բառերը:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:
7.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 8, մաս 5	5-րդ մասով խմբագրվող 7-րդ մասում «եկամտի տեսակը կամ դրանց հանրագումարը» բառերը փոխարինել «եկամուտը կամ նույն տեսակի եկամտի հանրագումարը» բառերով:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:
8.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և	Նախագծում լրացնել նոր հոդված, որով նախատեսվում է Օրենքի՝ չափերի հայտարարագրմանն առնչվող 42-րդ հոդվածի 1-ին	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:

		լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	մասում առևտրային կազմակերպություններում մասնակցությունը հայտարարագրելիս հայտարարագրել նաև այն կազմակերպության տվյալները, որի իրական շահառու է հանդիսանում անձը: Միաժամանակ առաջարկվում է սահմանել, որ իրական շահառու է համարվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի հիման վրա իրավաբանական անձի իրական շահառու հանդիսացող անձը: Ըստ այդմ, նախագծի համակարգումը փոփոխել:		
9.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ , հոդված 11 (նախկինում՝ 10)	Փոփոխել ծախսերի հայտարարագիր ներկայացնելու ժամկետները:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:
10	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»	Անցումային դրույթներով սահմանել Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնող անձանց	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:

		օրենքի նախագիծ , հոդված 11 (նախկինում՝10)	հայտարարագիր ներկայացնելու ժամկետները:		
11	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ , հոդված 11 (նախկինում՝10), «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 3, «Օպերատիվ- հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 2	Հոդվածներից հանել «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերնագիրը:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:
12	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և	Հոդվածներում «հրապարակման օրվան» բառերը փոխարինել «հրապարակմանը» բառով:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:

		<p>լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ , հոդված 11 (նախկինում՝ 10),</p> <p>«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 3</p> <p>«Վարչական իրավախախտումնե րի վերաբերյալ» օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 2</p> <p>«Օպերատիվ- հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 2</p>			
--	--	--	--	--	--

13	ՀՀ կառավարություն	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածում առաջարկվում է լրացնել նոր 5-րդ մաս, որով առաջարկվում է Օրենքի 25-րդ հոդվածի 9-րդ մասից հանել « ընդունելով վարույթը կասեցնելու մասին որոշում: Որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում, որոշման պատճենն ուղարկվում է հայտարարատուին, իսկ եթե վարույթը հարուցվել է դիմումի հիման վրա՝ դիմողին» բառերը: Առաջարկը հիմնավորվում է այն հանգամանքով, որ 26-րդ հոդվածը սպառիչ սահմանում է վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի կարգավորումները, ընդ որում, նույն հոդվածի 4-րդ մասն արդեն իսկ սահմանում է նույնաբովանդակ դրույթ:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:
14	ՀՀ կառավարություն	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ, վերնագիր	Նախագծի վերնագրում «լրացում» բառը փոխարինել «լրացումներ» բառով:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:

15	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, 3-րդ, 6-րդ, 8-րդ հոդվածներ,</p> <p>««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, 1-ին և 2-րդ հոդվածներ</p> <p>«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, 1-ին հոդվածի մասերի համարակալմանը:</p>	<p>Խմբագրել հոդվածների համարակալումը:</p>	<p>ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:</p>	<p>ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:</p>
----	------------------------------	---	---	---------------------	---------------------

16	ՀՀ կառավարություն		Նախագծերի փաթեթում առաջարկվում է ներառել «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ: Նախագիծը փաթեթում ներառվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությամբ և համաձայնեցված է Կենտրոնական բանկի հետ: Նախագծի ընդունման պարագայում բարեվարքության ուսումնասիրության փուլում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից վարկային տեղեկատվություն և վարկային պատմություն ստանալու գործընթացն առավել անխոչընդոտ կիրականացվի:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:
17	ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 1	«(այսուհետ Օրենսգիրք)» բառերը հանել նախագծից:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:
18	ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Վահագն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և	Միանվագ ծախսերի շեմը 1 միլիոնի փոխարեն սահմանել 2 միլիոն, իսկ նույն տեսակի ծախսերի հանրագումարի դեպքում երկու միլիոնը սահմանել երեք միլիոն:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է

	Հովակիմյան	լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ , հոդված 7			
19	ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Վլադիմիր Վարդանյան	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ , հոդված 6	Հոդված 6-ով խմբագրվող 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «բանկում ունեցած» բառերը փոխարինել «բանկային հաշիվներում առկա» բառերով:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է